ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2025թ. N_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 49-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

49. Օրակարգի հաստատումից հետո Հանձնաժողովի հերթական նիստում հարցերը քննարկվում են հետևյալ ընթացակարգով՝

1) Հանձնաժողովի հերթական նիստը վարողը ըստ օրակարգի ներկայացնում է քննարկվող հարցը և դրա վերաբերյալ զեկուցողին.

2) զեկուցողի ելույթ՝ մինչև տասը րոպե.

3) Հարց տալու կամ ելույթ ունենալու ցանկություն ունեցող անձինք դիմում են նիստը նախագահողին: Հարցը տրվում է, ինչպես նաեւ ելույթ ունեցողները հանդես են գալիս ըստ դիմելու հաջորդականության, նիստը նախագահողի հայտարարությամբ: Հարցի համար տրվում է մինչև երկու րոպե, իսկ պատասխանի համար՝ մինչև չորս րոպե, այնուհետև հարց տվողին և զեկուցողին արձագանքելու համար տրվում է մինչև երկուական րոպե.

4) մտքերի փոխանակություն՝ մինչև հինգ րոպե.

5) նիստը վարողի եզրափակիչ ելույթ՝ մինչև հինգ րոպե.

6) քվեարկություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ
ԶԻՆԱ ՉԱԼԻԿՅԱՆ
ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ
ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆ
ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Ն 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նշվում է, որ Երևան քաղաքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումները՝ Երևան քաղաքի ավագանին 2009 թվականի հունիսի 18-ի թիվ 1-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ընդունել է Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը՝ կարգավորելով նաև Երևան քաղաքի ավագանու հանձնաժողովի նիստերի գումարման, հանձնաժողովի նիստերում հարցերի քննարկման կարգը:

Որոշման հավելվածի 49-րդ կետը սահմանում է մշտական հանձնաժողովի նիստում հարցերի քննարկման ընթացակարգը: Սակայն, ի թիվս այլ ընթացակարգային դրույթների, կանոնակարգված չէ քննարկումների տևողությունը, ինչը հաճախ հանգեցնում է հանձնաժողովի անդամների համար անհավասար պայմանների՝ ինչպես հարցերի, այնպես էլ ելույթների առումով, ինչը հանգեցնում է նիստի բնականոն ընթացքի խաթարմանը: Բացի այդ, դա հնարավորություն է տալիս հանձնաժողովի նախագահին հայեցողաբար որոշել ելույթի կամ հարցի տևողությունը:

Նախագծով նախատեսված կարգավորումների նպատակն է ապահովել հանձնաժողովների նիստերի բնականոն գործունեությունը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ԶԻՆԱ ՉԱԼԻԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆ

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ